



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

21 հունվարի 2016 թվականի N 13-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ ՎԱՐՉԱԿԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 77¹ և 77² հոդվածները, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N ՆՀ-728 հրամանագրի 1.37-րդ, 1.38-րդ կետերը և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի դեկտեմբերի 29-ի N 1381-Ա հրամանը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել 2016 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը համաձայն հավելվածի:

2. Վարչական հսկողության իրականացման գործընթացում ղեկավարվել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2016 թվականի հունվարի 25-ի N 1/32.1/727-16 հանձնարարականով ներկայացված՝ համապատասխան ոլորտի պետական լիազորված մարմնի և իրավական հսկողության բարձրագույն մարմնի համատեղ հրամաններով հաստատված Հայաստանի Հանրապետության մարզպետների կողմից իրականացվող վարչական հսկողության հարցաշարով:

3. Անհրաժեշտության դեպքում վարչական հսկողության աշխատանքային խմբում ներգրավել մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների այլ մասնագետների:

4. Մասնագիտական հսկողություն իրականացնելիս անհրաժեշտություն առաջանալու դեպքում աշխատանքային խմբում ներգրավել նաև մասնագիտական որակավորում ունեցող այլ անձանց (համաձայնությամբ):

5. Աշխատանքային խմբի ղեկավարին՝ յուրաքանչյուր համայնքում վարչական հսկողություն իրականացնելուց հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում, իրավական հսկողության բարձրագույն մարմնի կողմից հաստատված օրինակելի ձևին համապատասխան կազմել արձանագրություն:

6. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ առաջին եռամսյակում իրականացված վարչական հսկողության արդյունքում կազմված արձանագրությունները, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն ներկայացնել եռամսյակին հաջորդող ամսվա առաջին տասնօրյակում:

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ**

2016 թվականի հունվարի 21
ք. Հրազդան

Կ. ԳՈՒԼՈՅԱՆ

**2016 թվականի առաջին եռամսյակում Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
համայնքներում իրականացվելիք վարչական հսկողության բնագավառները, ժամանակահատվածը և
վարչական հսկողություն իրականացնող աշխատանքային խմբի կազմը**

Հ/հ	Համայնքի անվանում	Ժամանակա հատվածը	Իրականացվելիք վարչական հսկողության բնագավառ	Վարչական հսկողություն իրականացնող պաշտոնատար անձիք	
				Զբաղեցրած պաշտոն (աշխատանքային խմբի ղեկավար, անդամ)	Ազգանուն, անուն
1	2	3	4	5	6
1	<i>Մարմարիկ</i>	ապրիլ 2013թ - փետրվար 2016 թ	<ol style="list-style-type: none"> 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ 2. Առևտրի և ծառայությունների բնագավառ 3. Բնապահպանության բնագավառ 4. Ընդերքօգտագործման բնագավառ 5. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ 6. Հողօգտագործման բնագավառ 7. Կրթության բնագավառ 8. Մշակույթի բնագավառ 9. Պաշտպանության բնագավառ 10. Սոցիալական պաշտպանության բնագավառ 11. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ 12. Տրանսպորտի և կապի բնագավառ 13. Ոստիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ 14. Առողջապահության բնագավառ 15. Քաղաքաշինության բնագավառ 16. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ 	<p style="text-align: center;">ղեկավար՝ ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության պետ անդամներ՝</p> <ol style="list-style-type: none"> 1. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի տեղական ինքնակառավարման և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության տեղական ինքնակառավարման և համայնքային ծառայության հարցերի բաժնի առաջատար մասնագետ 2. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ 3. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժնի պետ 4. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ 5. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժնի-մարզային հողային պետական տեսչության առաջատար մասնագետ 6. ՀՀ Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետի տեղակալ 	<p><i>Ալեքսանյան Հարություն Թումոյան Ռոբերտ Բաղդասարյան Սևդա Վիրաբյան Արամ Վարդանյան Արմեն Հովսեփյան Հակոբ Թումոյան Կամո</i></p>

2	Կուրսայր	հունիս 2013թ. - մարտ 2016թ.	<ol style="list-style-type: none"> 1. Արտակարգ իրավիճակների ընթացակարգ 2. Առևտրի և ծառայությունների ընթացակարգ 3. Բնապահպանության ընթացակարգ 4. Ընդերքօգտագործման ընթացակարգ 5. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության ընթացակարգ 6. Հողօգտագործման ընթացակարգ 7. Կրթության ընթացակարգ 8. Մշակույթի ընթացակարգ 9. Պաշտպանության ընթացակարգ 10. Սոցիալական պաշտպանության ընթացակարգ 11. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ընթացակարգ 12. Տրանսպորտի և կապի ընթացակարգ 13. Ոստիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ 14. Առողջապահության ընթացակարգ 15. Քաղաքաշինության ընթացակարգ 16. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք ընթացակարգներ 		
3	Նոր Գեղի	ապրիլ 2013թ. - փետր վար 2016թ.	<ol style="list-style-type: none"> 1. Արտակարգ իրավիճակների ընթացակարգ 2. Առևտրի և ծառայությունների ընթացակարգ 3. Բնապահպանության ընթացակարգ 4. Ընդերքօգտագործման ընթացակարգ 5. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության ընթացակարգ 6. Հողօգտագործման ընթացակարգ 7. Կրթության ընթացակարգ 8. Մշակույթի ընթացակարգ 9. Պաշտպանության ընթացակարգ 10. Սոցիալական պաշտպանության ընթացակարգ 11. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ընթացակարգ 12. Տրանսպորտի և կապի ընթացակարգ 13. Ոստիկանության ոլորտում տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ 14. Առողջապահության ընթացակարգ 15. Քաղաքաշինության ընթացակարգ 16. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք ընթացակարգներ 		

4	Բուժական	նոյեմբեր 2013թ - մարտ 2016թ.	<ol style="list-style-type: none"> 1. Արտակարգ իրավիճակների բնագավառ 2. Առևտրի և ծառայությունների բնագավառ 3. Բնապահպանության բնագավառ 4. Ընդերքօգտագործման բնագավառ 5. Անասնաբուժության, բուսասանիտարիայի և սննդամթերքի անվտանգության բնագավառ 6. Հողօգտագործման բնագավառ 7. Կրթության բնագավառ 8. Մշակույթի բնագավառ 9. Պաշտպանության բնագավառ 10. Սոցիալական պաշտպանության բնագավառ 11. Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի բնագավառ 12. Տրանսպորտի և կապի բնագավառ 13. Ոստիկանության դրոշմավոր տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության նկատմամբ 14. Առողջապահության բնագավառ 15. Քաղաքաշինության բնագավառ 16. Տեղական ինքնակառավարման մարմինների պարտադիր լիազորությունների մի շարք բնագավառներ 		
---	----------	------------------------------	--	--	--